ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 53
«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ
ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
30-ը հունիսի 2021թ.

Նիստը տեղի է ունեցել առցանց՝ zoom հարթակում: Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 31-ը: Նիստին հրավիրված էին նաև «Ակունք» հանդեսի գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Ա. Ներսիսյանը, ԵՊՀ ԻՄ «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավար **Հ. Մովսեսյան**, ԵՊՀ ԻՄ ԿԲՎԴ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյանը** և ԵՊՀ ԻՄ ՏՀՍԶ բաժնի վարիչ **Տ. Խաչատրյանը:**

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա.Հ.Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ.Ս.Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա.Հ.Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Ակունք» գիտամեթոդական հանդեսի գործունեության մասին:
   (Զեկուցող՝ «Ակունք» հանդեսի գլխավոր խմբագիր **Ա. Ներսիսյան)**
2. ԵՊՀ ԻՄ հետազոտական ոլորտի ռազմավարության հաստատում:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավար **Հ. Մովսեսյան)**
3. ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ի 2020-2021 ուստարվա գործունեության մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ **Մ. Ասիլյան)**
4. Հաղորդում կրթական ծրագրերի վերանայման գործընթացի մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյան)**
5. Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյան)**
6. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2021թ. հարցման արդյունքների մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան)**
7. 2022թ. ԵՊՀ ԻՄ ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրեն պաշտոնակատար **Ա. Մակարյան)**
8. Հաղորդում ԵՊՀ ԻՄ գրադարանի 2020-2021ուստարվա գործունեության մասին:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գրադարանի վարիչ **Վ. Պողոսյան)**

9. Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2021թ. կատարողականի (մինչև 15.06.2021թ.) մասին։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյան)**

10. Ընթացիկ հարցեր

10.1. ԵՊՀ ԻՄ զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի կազմի հաստատում։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան)**

10.2. ԵՊՀ ԻՄ որակի կառավարման հանձնաժողովի կազմի հաստատում։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյան)**

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց:

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**

Որոշում՝

➢ Հաստատել նիստի օրակարգը։

<u>Օրակարգի առաջին</u>՝ «Ակունք» գիտամեթոդական հանդեսի գործունեության մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ «Ակունք» հանդեսի գլխավոր խմբագիր պրոֆեսոր **Ա. Ներսիսյանի** հաղորդումը:

Ա. Ներսիսյանը համառոտ ներկայացրեց, թե ինչպես ԲՈԿ-ը Ս. Գոգյանի ղեկավարությամբ 2018թ.-ի դեկտեմբերի վերջին առանց որևէ չափանիշներ հաշվի առնելու բազմաթիվ հանդեսներ հանեցին ԲՈԿ-ի գիտական հանդեսների ցանկից, այդ թվում էր նաև «Ակունքը»։ Նա նշեց, որ դրանից հետո փորձել են տպել, բայց խնդիրներ են առաջացել ԲՈԿ-ի ցանկում չլինելու պատճառով, և արդյունքում տպագրվել է մեկ համար։ Ա. Ներսիսյանը նշեց, որ այս պահի դրությամբ հավաքվել են մի քանի հոդվածներ, բայց դրանց մի մասը չեն բավարարում համալսարանի կողմից ներկայացված չափանիշներին։ Նա նշեց, որ անհրաժեշտ է հավաքել անհրաժեշտ թվով հոդվածներ աշնանը հրատարակելու և դիմելու ԲՈԿ՝ գիտական հանդեսների ցանկում ընդգրկվելու համար, անհրաժեշ է կայքի Ակունքի էջում նույնպես կատարել որոշակի փոփոխություններ։

<u>Արտահայտվեցին</u> – ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ Բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը։

Ռ. Բարխուդարյանը նշեց, որ առաջին հերթին պետք է հստակեցնենք հանդես ունենալու նպատակը՝ եթե հանդեսում տպագրվում են միայն գիտական աստիճան կամ կոչում ստանալու համար, ապա մի գուցե դա ճիշտ նպատակ չէ հադես ունենալու համար: Հանդեսը նպատակ պետք է ունենա նոր գիտական միտքը հասու դարձնել ընթերցողներին, ԲՈԿ-ում լինելու կամ չլինելու հարցը դա ԲՈԿ-ի խնդիրն է, և այդ տեսանկյունից հարցին մոտենալը ճիշտ չէ: Երկրորդ հարցը այն է, որ ամսագիրը չի կարող ամեն ինչ պարունակել, իսկ «Ակունք» հանդեսը պարունակում է ամեն ինչ՝ մշակույթ, պատմություն, տնտեսագիտություն, քրեագիտություն, լեզվաբանություն, փիլիսոփայություն, զբոսաշրջություն, հանդեսը պետք է ունենա կոնկրետ ուղվածություն: Ռ. Բարխուդարյանը նշեց, նաև որ պատրաստվում է ԵՊՀ ռեկտորի հրաման, թե ինչ տեխնիկական չափանիշների պետք է բավարարաեն ԵՊՀ հանդեսները, որպեսզի ԵՊՀ-ն երաշխավորի ԲՈԿ-ում ընդգրկվելու համար և դրանցից մեկը էլեկտրոնային կառավարումն է:

Ա. Մակարյանը նշեց, որ մենք Մասնաճյուղի առկա ռեսուրսներով կուսումնասիրենք ԵՊՀ-ի պահանջները, հարցում կուղարկենք ամբիոններին հետազոտական ուղղությունների վերաբերյալ և մոտակա գիտխորհրդի նիստերից մեկի ժամանակ կանդրադառնանք այս հարցին վերջնականապես ԵՊՀ պահանջներին համապատասխան հանդես ունենալու որոշում կայացնելու առումով, այսինքն՝ ուզում ենք ունենալ թե ոչ, կարող ենք արդյոք ունենալ թե ոչ, և այլ հարցեր որոնք բարձրաձայնվեցին:

Վերջում Ա. Ներսիսյանը նշեց, որ անհրաժեշտ է քննարկել նաև հանդեսի գլխավոր խմբագրի հարցը, որովհետև ինքը շատ ծանրաբեռնված է:

Որոշեցին.

«Ակունք» գիտամեթոդական հանդեսի գործունեության մասին գլխավոր խմբագիր Ա. Ներսիսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի երկրորդ</u>՝ «ԵՊՀ ԻՄ հետազոտական ոլորտի ռազմավարության հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավար **Հ. Մովսեսյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ռազմավարությունը էլեկտրոնային տարբերակով ուղարկվել է գիտխորհրդի անդամներին՝ ծանոթանալու, առաջարկներ և դիտողություններ ներկայացնելու համար:

Հ. Մովսեսյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետազոտական գործունեության զարգացումը, որը պայմանավորված է ՀՀ, մասնավորապես՝ Տավուշի մարզի տնտեսության արդիականացման ու մրցունակության

բարձրացման գործընթացներում մասնաճյուղի իրական մասնակցության անհրաժեշտությամբ, նպատակահարմար է իրականացնել մարզի գերակա ոլորտներում առկա հիմնախնդիրների հետազոտման ուղղությամբ: Տավուշի մարզը ագրարային, թերզարգացած արդյունաբերությամբ և ծառայությունների ոլորտով մարզ է: Համաձայն Տավուշի մարզպետարանի՝ մարզի զարգացման ռազմավարության առաջնահերթ նպատակներից են ժամանակակից գյուղատնտեսության զարգացումը և գյուղական տարածքների բարելավումը, արդյունաբերության զարգացումը՝ հիմնված բնական պաշարների և գյուղմթերքների վերամշակման վրա:

Այնուհետև Հ. Մովսեսյան անդրադարձավ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում հետազոտական գործունեության նպատակներին և խնդիրներին, ռազմավարական խնդիրների լուծման հիմնական ուղիներին և մշակվելիք կառուցակարգերին ինչպես նաև ռազմավարության իրականացման հաջողությունների և որակական արդյունքների ցուցանիշներին (մանրամասն՝ հավելված 1-ում):

<u>Արտահայտվեցին</u> – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ գիտքարտուղար Մ.Աթոյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Մ. Միքայելյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբորնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ Գ. Սիմոնյանը:

Մասնավորապես Մ.Աթոյանը նշեց, որ ռազմավարության վերաբերյալ գիտխորհրդի անդամների կողմից գրավոր որևէ առաջարկ կամ դիտողություն չենք ստացել:

Ա. Մակարյանը նշեց, որ անհրաժեշտ է վերանայել արդյունավետության ցուցիչները, որովհետև դրանք բովանդակային չեն համապատասխանում ցուցիչ լինելու սահմանմանը, անհրաժեշտ է մի փոքր վերաձևակերպել, դրանք պետք է լինեն կոնկրետ հիմքեր որակական կամ քանակական գնահատական համար: Ա.Մակարյանը նշեց, որ անհրաժեշտ է վերաձևակերպել նաև նպատակներն ու խնդիրները, դրանք խառնվել են:

Այնուհետև Ա.Մակարյանը նշեց, որ սույն փաստաթղթի հաստատման անհրաժեշտությունն առաջացել է ԵՊՀ ԻՄ-ում ներքին դրամաշնորհային մրցույթ հայտարարելուց հետո, գրված է երկարաժամկետ գործունեության համար, և միտված է տարածաշրջանում լուրջ հետազոտական կենտրոն դառնալու մեր ցանկությամբ: Ա.Մակարյանը նշեց, որ Հ.Մովսեսյանի, Գ. Սիմոնյանի և Մ.Միքայելյանի հետ միասին կխմբագրեն վերոհիշյալ թերությունները:

Բաց քվեարկությամբ՝ 31 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 53/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հետազոտական գործունեության 2021-2026թթ. ռազմավարությունը համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Օրակարգի երրորդ</u> **՝** «ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ի 2020-2021 ուստարվա գործունեության մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ **Մ. Ասիլյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի Ուսանողական գիտական ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է թվով 173 գիտական, կրթական, մշակութային ծրագրեր և միջոցառումներ, մասնավորապես՝ 4 ինտելեկտուալ խաղ, 21 սեմինար-քննարկում, 3 կինոդիտում, 2 գիտաճանաչողական այց, 3 մրցույթ, խմբակների 125 դասընթաց և այլն: 2020թ սեպտեմբեր ամսին, ուստարվա մեկնարկի հետ զուգընթաց իրականացվել է «Իրազեկում» խորագրով ծրագիրը, որի ընթացքում ՈՒԳԸ անդամները հանդիպել են առաջին կուրսեցիների հետ, խոսել ՈՒԳԸ կառույցի և գործունեության մասին: Այնուհետև մեկնակվել է ՈՒԳԸ գիտական խմբակների ձևավորման գործընթացը: Ձևավավորվել է թվով 6 խմբակ. դրանք են՝ բանասերների, պատմաբանների, տնտեսագետների, օտար լեզուների, տուրիզմի: Խմբակների գործունեությունը սկսվել է 2020-2021թթ. ուստարվա 2-րդ կիսամյակից: 2020թ. փետրվարին իրականցվել է «Ցուցահանդես-տոնավաճառ՝ ի աջակցություն վիրավոր զինվորների», որի նպատակն էր աջակցել պատերազմում վիրավորում ստացած զինվորների առողջության վերականգնմանը: 2021թ. փետրվարին տեղի է ունեցել ճանաչողական միջոցառում, որի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել ՈՒԳԸ կառույցի գործունեությանը և նպատակներին: Այս միջոցառման արդյունքում ՈՒԳԸ կառույցին անդամագրվեց շուրջ 60 ուսանող: Նույն ամսվա մեջ FLEX ALUMNI ARMENIA-ի հետ համագործակցությամբ տեղի ունեցավ «Speak UP» խորագրով միջոցառում-քննարկումը: Այս կառույցի հետ իրականացվել են թվով 2

սեմինար, որի նպատակն էր օտար լեզու սովորող ուսանողներին հմտացնել անգլերեն լեզվի մեջ: ԵՊՀ ԻՄ գրադարանի հետ համագործակցությամբ իրականցվեց «Բացահայտենք մեր գրադարանը» խորագրով ծրագիրը, որի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել գրադարանում առկա գրականությանը: Այնուհետև, 2021թ. մարտ ամսին Տավուշի մարզային գրադարանի հետ համագործակցությամբ տեղի ունեցան մի շարք գիտամշակութային միջոցառումներ: Համագործակցությունը Տավուշի մարզային գրադարանի հետ կրում է շարունակական բնույթ: 2021թ. ապրիլ ամսին իրականացվեց «Ամենախելացին-4» ինտելեկտուալ խաղը: Ամերիկյան կենտրոնի հետ համագործակցությամբ տեղի ունեցավ գրքի քննարկում: Համագործակցելով Տավուշի թեմի առաջնորդարանի հետ տեղի ունեցավ ուխտագնացություն: Նպատակն էր սերմանել ազգայինը և բացահայտել պատմամաշակութային կոթողները: Հավելենք նաև այն, որ համագործակցությունը շարունակական բնույթ է կրում: Դասախոսների հետ սերտ համագործակցությամբ իրականցվել են բանախոսություններ:

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ի կիսամյակային հաշվետվությունները կարող եք տեսնել հավելված 2-ում և հավելված 3-ում:

<u>Արտահայտվեցին</u> **–** ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը, Գ. Հովհաննիսյանը, Գ. Սիմոնյանը, Ա. Հովակիմյանը: Առաջարկվեց ոսցիալ-մշակութային միջոցառումներից առավել շեշտադրում կատարել ուսանողների գիտահետազոտական գործունեության ակտիվացմանը:

Որոշեցին.

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ 2020-2021 ուստարվա գործունեության մասին Մ. Ասիլյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի չորրորդ</u> **՝** «Հաղորդում կրթական ծրագրերի վերանայման գործընթացի մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյանի** հաղորդումը:

Ն. Գրիգորյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի 8 § 2 հրամանի համաձայն հաստատվել են կրթական ծրագրերի վերանայման 12 աշխատանքային խմբեր, որոնց կազմերը ներկայացրել են համապատասխան ամբիոնները: Աշխատանքային խմբերի կազմում ներգրավված են եղել արտաքին և ներքին շահակիցներ: Խմբերը կազմել և Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժին են ներկայացրել իրենց աշխատանքային պլանները: Հրամանի համաձայն մինչև մայիսի 21-ը ԿԲԴՎ բաժին պետք է ներկայացնեին վերանայված կրթական ծրագրերը: Այս պահի դրությամբ

պատրաստ են առկա ուսուցման համակարգի 11 կրթական ծրագրերը և տեղադրված են Մասնաճյուղի կայքէջում: Առկա ուսուցման համակարգի կրթական ծրագրերից վերանայված չէ միայն «Դիզայն» մասնագիտության կրթական ծրագիրը: Կրթական ծրագրեր կան, որոնք որևէ փոփոխության չեն ենթարկվել, կան ծրագրեր, որում փոխվել են վերջարդյունքները, ուսումնական պլանները, ավելացվել կամ պակասեցվել են դասընթացներ, փոխվել են դասընթացների նկարագրիչները: Առաջին անգամ այս ուսումնական տարվա ընթացքում պատրաստվել են նաև հեռակա ուսուցման համակարգի կրթական ծրագրերը: Բաժինը պատրաստել է 2020-2021 «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական ծրագիրը, որը վերանայելու համար ձևավորել է աշխատանքային խումբ (ԵՊՀ ԻՄ տնօրենի 27 § 2 հրաման), որը վերանայելու 2021թ. մագիստրոսական ծրագիրը:

Կրթական ծրագրերը վերանայելիս աշխատանքային խմբերը կամ խմբերի որոշ անդամներ հանդիպել են մի շարք դժվարությունների.

- որոշ կրթական ծրագրերի ղեկավարներ ահազանգում էին, որ դասախոսները չեն ցանկանում վերանայել իրենց ծրագրերը
- պասիվ են կամ գրեթե չեն աջակցել ամբիոնի լաբորանտները:

Ն. Գրիգորյանը խնդրեց ամբիոնի վարիչներին, դեկանների և կրթական ծրագրերի ղեկավարների՝ հետևողական լինեն կրթական ծրագրերը հավուր պատշաճի իրականացմանը:

<u>Արտահայտվեց</u> **–** ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը:

Մասնավորապես Ա.Մակարյանը նշեց, որ ամբիոնի վարիչները, դեկանները և կրթական ծրագրերի ղեկավարները պատասխանատու են վերոհիշյալ աշխատանքային խմբերի ճիշտ գործունեությանը համար: Պետք է այդ խմբերում ընդգրկել աշխատող մարդկանց և պետք է ուշադիր լինել կրթական ծրագրերի իրականացվող բովանդակությանը, որպեսզի դրանք լինեն համապատասխան հաստատված ծրագրերին: Նշվեց, որ Դիզայն կրթական ծրագրի սկզբնական տարբերակը ունենք, և ֆակուլտետը պետք է տանի կազմակերպչական աշխատանք այդ կրթական ծրագրի վերջնական տարբերակը ունենալու համար:

Որոշեցին.

ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի վերանայման գործընթացի մասին ԿԲԴՎ բաժնի վարիչ Ն. Գրիգորյանի հաղորդումը ընդունել ի գիտություն:

***<u>Օրակարգի հինգերորդ</u>*՝** «Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ՈՒՄՎ պետ **Ա. Դավթյանի** հաղորդումը։

Նա նշեց, որ 2020-2021 ուստարվա առկա և հեռակա ուսուցմամբ ամփոփիչ ատեստավորումը Մասնաճյուղում իրականացվել է համաձայն հաստատված գրաֆիկի՝ սույն թվականի մայիսի 15-ից մինչև հունիսի 28-ը: Արդյունքների վերլուծությունը, որն իրականացվել է Ուսումնամեթոդական վարչության կողմից, ներկայացնում է վերջին երեք տարիների համեմատական տվյալները։ 2020-2021 ուսումնական տարում առկա և հեռակա ուսուցմամբ Մասնաճյուղն ունեցել է ընդհանուր **365 շրջանավարտ**, այդ թվում առկա ուսուցմամբ 10 կրթական ծրագրով՝ 150 շրջանավարտ (39 անվճար, 111 վճարովի) և հեռակա ուսուցմամբ 7 կրթական ծրագրով՝ 215 շրջանավարտ (ևս 3 շրջանավարտ նախորդ տարիներից)։ Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել և դրական է գնահատվել առկա ուսուցման շրջանավարտների 100%-ը և հեռակա ուսուցման 94.4%-ը (8 ուսանող չի ներկայացել, 4 ուսանող ստացել է անբավարար)։ 2020-2021 ուսումնական տարում Մասնաճյուղն ունեցել է նաև Մանկավարժի լրացուցիչ որակավորման 40 շրջանավարտ: Ֆակուլտետների ներկայացմամբ առկա ուսուցման համակարգում, համեմա-տական կարգով, մեծ թվով շրջանավարտներ ունեցել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետը, իսկ փոքր թվով՝ Կիրառական արվեստի ֆակուլտետը: Ըստ կրթական ծրագրերի, ավելի շատ շրջանավարտներ ունեցել են *Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*, *Անգլերեն լեզու և գրականություն*, *Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա* կրթական ծրագրերում, իսկ նախորդ ուստարիների շրջանավարտների թվի համեմատությամբ՝ *Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Դիզայն* կրթական ծրագրերով: Ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականով ամենաբարձր ցուցանիշը գրանցել է *Ֆրանսերեն լեզու և գրականություն* կրթական ծրագիրը (նույն ցուցանիշը գրանցվել է նաև 2020թ. արդյունքներով), իսկ ամենացածրը՝ *Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա*: Նախորդ ուստարվա համեմատ ցուցանիշները բարձրացել են *Դիզայն, Քարտեզագրություն և կադաստրային գործ, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Հայոց լեզու և գրականություն* կրթական ծրագրերում: Գերազանցության դիպլոմ առկա ուսուցմամբ ստացել են ընդամենը 25 շրջանավարտ: Թվական տվյալներով առանձնանում են *Անգլերեն լեզու և գրականություն*, *Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա* կրթական ծրագրերը: Առկա ուսուցման

համակարգում ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականը լավ և գերազանց է, իսկ հեռակայում՝ հիմնականում բավարար: Հեռակա ուսուցման համակարգում վերջին երեք տարվա տվյալներով ամենաշատ շրջանավարտներ ունեցել ենք *Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա, Բնապահպանություն և բնօգտագործում* մասնագիտություններում: Ամփոփիչ ատեստավորման միջին գնահատականով բարձր ցուցանիշ գրանցվել է Տարրական մանկավարժություն և մեթոդիկա կրթական ծրագրով, իսկ ցածր ցուցանիշ գրանցվել է *Տնտեսագիտություն* կրթական ծրագրով՝ պայմանավորված շրջանավարտների կարողություններով: Գերազանցության դիպլոմ հեռակա ուսուցմամբ ստացել են 2 շրջանավարտներ՝ *Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*, *Պատմություն* կրթական ծրագրերով: Ամփոփիչ ատեստավորման գործընթացում **բողոքարկումներ չեն եղել**: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից տրված հաշվետվությունները ներկայացված են Մասնաճյուղի կայքէջում:

Ա. Դավթյանի ներկայացրած թվային տվյալները գրաֆիկական տեսքով կարող եք տեսնել հավելված 4-ում:

Արտահայտվեց **–** ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը: Նա նշեց, որ ներկայացված արդյունքները պետք է հաշվի առնել մյուս տարի համապատասխան գործընթացներն ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Նա հանձնարարեց ՄԿՈԱ բաժնին վերլուծել արդյունքները, ինչպես նաև ատեստավորման հանձնաժողովների նախագահների կարծիքները և առաջիկա գիտական խորհրդում ներկայացնել հաղորդում, իսկ դեկաններին և ամբիոնների վարիչներին հանձնարարեց մանրամասն ուսումնասիրել հանձնաժողովների կարծիքները և աշխատանքերը բարելավելու համար նույնպես համապատասխան առաջարկներով հանդես գալ տնօրինության առաջ:

Որոշեցին.

ԵՊՀ ԻՄ–ի՝ 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանի հաղորդումը ընդունել ի գիտություն:

Օրակարգի վեցերորդ՝ « Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2021թ. հարցման արդյունքների մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումը:

Մ. Ճաղարյանը մասնավորապես նշեց, որ հարցումն իրականացվել է անանուն և առցանց: 2020-21 ուստարում Մասնաճյուղի առկա ուսուցման 150 շրջանավարտից հարցմանը մասնակցել է 127-ը, այսինքն՝ շրջանավարտների 85%-ը, որը առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության բավականին բարձր ցուցանիշ է: Հարցման միջոցով պարզվել է շրջանավարտների բավարարվածությունն ըստ 6 ոլորտների՝

1 կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսուցման մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից,
2 Մասնաճյուղում ուսանողների գնահատումից,
3 ավարտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից,
4 ուսումնական ռեսուրսներից և համալսարանական միջավայրից,
5 շրջանավարտների կարծիքը կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ,
6 բավարարվածությունը ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից:

Մ.Ճաղարյանը Մասնաճյուղի ուսումնական գործընթացը կազմակերպող և իրականացնող բոլոր օղակներին առաջարկեց քննարկել վերլուծության մեջ նշված գնահատականները, համագործակցել Մասնագիտական կրթության որակի ապահովման ու Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինների հետ՝ կրթության որակի հետ կապված խնդիրները բացահայտելու, քննելու և լուծման կամ բարելավման ուղիներ գտնելու համար: Այնուհետև Մ.Ճաղարյանը հավելեց, որ վերլուծության արդյունքները ըստ ֆակուլտետների և ամբիոնների կուղարկենք համապատասխան ստորաբաժանումներին:

ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումն ամբողջությամբ կարող եք տեսնել հավելված 5-ում, իսկ թվային տվյալները և դիագրամները հավելված 6-ում:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը, ՈՒԽ-ի նախագահ Լ.Մադաթյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր Մ. Միքայելյանը, դոցենտ Լ. Ֆլջյանը:

Ա. Մակարյանը նշեց, որ ներկայացված արդյունքները պետք է հաշվի կառնել մյուս տարի համապատասխան գործընթացները ավելի արդյունավետ կազմակերպելու համար: Նա հանձնարարեց ՄԿՈԱ բաժնին վերլուծել վեր հանված խնդիրները և առաջիկա գիտական խորհրդում ներկայացնել հաղորդում, իսկ դեկաններին և ամբիոնների վարիչներին հանձնարարեց մանրամասն ուսումնասիրել հանձնաժողովների կարծիքները և աշխատանքերը բարելավելու համար համապատասխան առաջարկով հանդես գալ տնօրինության առաջ: Ա. Մակարյանը նշեց նաև, որ Անգլերեն բաժնում

ավարտական աշխատանքների մեծ մասը գերազանց են, բայց ուսանողները դժգոհ են, այսինքն միշտ չէ, որ գերազնաց գնահատականը լավ է նշանակում:

Ա. Մակարյանը նշեց նաև, որ անանուն առցանց հարցումները չեն կարող տալ ամբողջական օբյեկտիվ պատկեր, պետք է խորանալ վեր հանված խնդիրների մեջ:

Նա նաև նշեց, որ գրեթե ամեն շաբաթ հանդիպում է ԵՊՀ ԻՄ գրադարանի վարիչի հետ և չի եղել այնպիսի գրքի պահանջ, որ չգնվի, բայց արդեն երրորդ վերլուծությունն է, որ ուսանողները դժգոհ են գրադարանում առկա գրքերի քանակից և այլից: Նա կարևորեց նաև վերհանված խնդիրների անաչառ քննարկումը ստորաբաժանուներում և համապատասխան լուծումներ տալը, այսինքն արդյունքները ուղարկել ստորաբաժանումներին նրանց կողմից առաջարկություններ ներկայացնելու ակնկալիքով:

ՈՒԽ-ի նախագահ Լ. Մադաթյանը նշեց, որ այդքան էլ ցավալի չէ բավարարվածության ցածր մակարդակը շրջանավարտների մոտ, որովհետև ես ինքս շրջանավարտ եմ և կարող եմ փաստել, որ արդյուների վրա ազդել են ոչ միայն Քովիդ -19-ով պայմանավորված հանգամանքները, այլև այս տարվա շրջանավարտները առաջին կուրսում դասադուլների են մասնակցել, չորրորդ կուսում էլ 44 օրյա պատերազմն է տեղի ունեցել, և այս ամենը հանգեցրել է բավարարվածության տրամաբանական ցածր մակարդակի:

Լ.Ֆլջյանը նշեց, որ Կիրառական արվեստի ֆակուլտետում ավարտական աշխատանքները նույնպես բարձր են գնահատվում, կարելի է մի քիչ ավելի օբյեկտիվ մոտենալ գնահատականներին:

Որոշեցին.

ԵՊՀ ԻՄ–ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2021թ. հարցման արդյունքների մասին ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ.Ճաղարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

- ՄԿՈԱ բաժնին հանձնարարել ուսումնասիրել բոլոր հանձնաժողովների նախագահների կարծիքներն ու առաջարկությունները, դրանք ներկայացնել ֆակուլտետներ և տնօրենության առաջիկա նիստերից մեկի քննարկմանը:
- Ֆակուլտետների դեկաններին հանձնարարել պատրաստել և ներկայացնել հետագա բարելավման, վերհանված խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկությունների փաթեթ:

<u>Օրակարգի յոթերորդ</u>՝ «2022թ. ԵՊՀ ԻՄ ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրեն պաշտոնակատար **Ա. Մակարյանի** հաղորդումը։

Ա. Մակարյանը ներկայացրեց ընդունելության մասնագիտությունների նախնական ցանկը (տես հավելված 7), նշեց, որ մինչև 2021թ.-ի սեպտեմբերի 15-ը պետք է ներկայացնենք ԵՊՀ ԻՄ 2022թ.-ի ընդունելության մասնագիտությունների ցանկի վերջնական տարբերակը։ Այնուհետև նա մանրակրկիտ ներկայացրեց 2021թ.-ի ընդունելության նախնական արդյունքները ըստ մասնագիտությունների և առաջարկեց ելնելով այս տարվա արդյունքներից ներկայացնել առաջարկներ առաջիկա գիտական խորհրդի նիստում քննարկելու համար։

<u>Արտահայտվեց</u> **–** **ՄԿՈԱ** բաժնի վարիչ Մ. Ճաղարյանը, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ. Միքայելյանը և այլոք։

ԵՊՀ ԻՄ-ի ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ Մ.Ճաղարյանի կողմից եղավ առաջարկ մասնաճյուղի 2022թ. ընդունելության մասնագիտությունների ցանկում ընդգրկել նոր մասնագիտություն՝ «Մեխատրոնիկա և ռոբոտատեխնիկա»: Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ Մ.Միքայելյանի կողմից հնչեց առաջարկ՝ ցանկում «Կառավարում» մասնագիտությունն ավելացնելու վերաբերյալ:

ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը նշեց, որ պետք է համապատասխան ամբիոններն իրականացնեն տարածաշրջանի աշխատաշուկայի վերաբերյալ ուսումնասիրություն՝ հիմնավորելու, թե արդյոք առաջարկվող մասնագիտությունները պահանջարկ ունեն աշխատաշուկայում, և որքանով են բուհի ռեսուրսները, նյութատեխնիկական բազան հնարավորություն տալիս այդ մասնագիտությունները ներդնելու մասնաճյուղում:

Որոշվեցին.

2022թ. ԵՊՀ ԻՄ ընդունելության մասնագիտությունների ցանկի քննարկում հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն։

- Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին սեղմ ժամկետներում պատրաստել և Ուսումնամեթոդական վարչությանը ներկայացնել 2022թ. ԵՊՀ ԻՄ ընդունելության մասնագիտությունների վերաբերյալ առաջարկությունների փաթեթ։

<u>Օրակարգի ութերորդ՝</u> «Հաղորդում ԵՊՀ ԻՄ գրադարանի 2020-2021 ուստարվա գործունեության մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ գրադարանի վարիչ **Վ. Պողոսյանի** հաղորդումը:

Գրադարանի վարիչ Վ.Պողոսյանն անդրադարձավ հաշվետու ժամանակահատվածում իրականացված գրքային ֆոնդի համալրմանը, ս.թ. հունիսի 30-ի դրությամբ ընդհանուր գրքային ֆոնդին, հայ և օտարալեզու գրականության թվային հարաբերակցությանը, նվիրատվության և գնման միջոցով գրքային ֆոնդի համալրման տվյալներին, ԵՊՀ ԻՄ-ի էլեկտրոնային գրադարանի կայքէջի ցուցանիշներին, որոնք բավականին բարձր էին: ԵՊՀ ԻՄ զարգացման 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի իրականացման 2020-2021 ուստարվա կատարողականի վերաբերյալ գրադարանի հաշվետվությունը կարող եք տեսնել հավելված 8-ում, իսկ հաշվետվության հետ կապված համեմատական թվային դիագրամները՝ հավելված 9-ում:

<u>Արտահայտվեցին</u> **–** ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա.Մակարյանը, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Լ. Հարությունյանը:

Մասնավորապես Լ. Հարությունյանը նշեց, որ գրադարանում կա Ռուսաց լեզվի գծով գրականության պակաս:

Ա. Մակարյանը նշեց, որ վերջին երեք տարվա վերլուծությունները ցույց են տալիս որ գրադարանում կան խնդիրներ, պետք է բացահայտել խնդիրը, պարզել պատճառները, խորը ուսումնասիրել վերլուծությունները և խոսել ուսանողների հետ, անհրաժեշտ է հրավիրել գրադարանային խորհրդի նիստ և մանրակրկիտ քննարկել խնդիրները:

Որոշվեց՝

ԵՊՀ ԻՄ–ի գրադարանի՝ 2020-2021 ուստարվա գործունեության մասին Վ.Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

- Հրավիրել գրադարանի խորհրդի նիստ՝ մշակելու գրադարանի հետագա զարգացմանն ուղղված միջոցառումներ:

<u>Օրակարգի իններորդ՝</u> « Հաղորդում ԵՊՀ ԻՄ 2021թ. կատարողականի (մինչև 15.06.2021թ.) մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյանի** հաղորդումը:

ԵՊՀ ԻՄ-ի՝ 2021թ. բյուջեի կատարողականի (մինչև 15.06.2021թ.) մասին **Մ.Մխիթարյանը** մասնավորապես նշեց, որ մուտքերի մեծ մասը ձևավորվում է ուսման վարձավճարներից: Տարվա համար նախատեսված 293 միլիոն 500 հազար ՀՀ դրամի դիմաց մուտք է եղել 142 միլիոն 804 հազար ՀՀ դրամ (ուսման վճար): Պետական ֆինանսավորումը 51 միլիոն 722 հազար ՀՀ դրամ է, որից 8

միլիոնը կազմում է Արցախյան 2-րդ պատերազմի մասնակիցների (1-ին փուլում ընդգրկվածների) 1-ին կիսամյակի ուսման վճարը: Բանկում ավանդ ձևակերպված միջոցներից ստացվել են տոկոսներ՝ 51 միլիոն 496 հազար ՀՀ դրամ: Ծախսերի մեծ մասը կազմում են աշխատավարձերը: Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից՝ նախատեսված 408 միլիոն ՀՀ դրամից, հաշվետու 5 ամսում ծախսվել է 167 միլիոն 922 հազար ՀՀ դրամ: Հիմնական աշխատողների բժշկական ապահովագրության համար, որը նախահաշվով կազմել է 7 միլիոն ՀՀ դրամ, հաշվետու ժամանակահատվածում ծախսվել է 4 միլիոն 725 հազար ՀՀ դրամ: «Այլ ծառայություններ» հոդվածով նախատեսված 500 հազար ՀՀ դրամից հակահրդեհային պաշտպանության համար ծախսվել է 350 հազար ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ նախահաշվի հոդվածներով նախատեսված ծախսերը նորմայից պակաս են եղել:

ԵՊՀ ԻՄ գլխավոր հաշվապահ **Մ. Մխիթարյանի** հաղորդումը կարող եք տեսնել հավելված 10 ում:

Որոշվեց՝

ԵՊՀ ԻՄ–ի 2021թ. կատարողականի (մինչև 15.06.2021թ.) մասին **Մ. Մխիթարյանի** հաղորդումը ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

10.1 Լսեցին՝ ԵՊՀ ԻՄ զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի կազմի հաստատում հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Հ. Մակարյանի** հաղորդումը:

Ա.Մակարյանը նշեց, որ ԵՊՀ-ն մշակել է զարգացման՝ 2021-2026 թթ. ռազմավարական ծրագիր, որը դեռևս պետք է հաստատվի ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից: Մասնաճյուղի ռազմավարական ծրագիրը պետք է հիմնված լինի Մայր բուհի ծրագրի վրա և ունենա տարածաշրջանային խնդիրներին վերաբերող շեշտադրումներ: Հանձնաժողովի առաջարկվող կազմում ներգրավված են ԵՊՀ ռեկտորատի, Տավուշի մարզպետարանի և մասնաճյուղի ուսանողական կառույցների ներկայացուցիչներ, ինչպես նաև այն ստորաբաժանումների ղեկավարները, ովքեր պետք է իրականացնեն այդ ծրագիրը: Նա առաջարկեց հանձնաժողովում ընդգրկել հետևյալ աշխատակիցներին.

1. **Մակարյան Անուշավան** – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար,
2. **Բարխուդարյան Ռաֆայել** – ԵՊՀ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր,
3. **Դավթյան Արկադի** – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ,

4. **Ճաղարյան Մարիետա** – Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչ,
5. **Մովսեսյան Հովսեփ** – «Տավուշ» հետազոտական կենտրոնի ղեկավար,
6. **Գրիգորյան Նաթելլա** – Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատարստման բաժնի վարիչ,
7. **Եգանյան Արման** – Արտաքին կապերի բաժնի վարիչ,
8. **Խաչատրյան Տաթևիկ** – ՏՀՍԶ բաժնի վարիչ,
9. **Բեգինյան Լիանա** – ՄԿՊԿ բաժնի վարիչ,
10. **Պողոսյան Վլադիմիր** – Գրադարանի վարիչ,
11. **Սարգսյան Վարդան** – ՏԳԿՍ բաժնի վարիչ,
12. **Մխիթարյան Մելանյա** – Գլխավոր հաշվապահ,
13. **Միքայելյան Միքայել** – Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար,
14. **Հովհաննիսյան Գուրգեն** – Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար,
15. **Սիմոնյան Գևորգ** – Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի պաշտոնակատար,
16. **Ավետիսյան Գայանե** – Տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար,
17. **Աղաբաբյան Վահան** – Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար,
18. **Սիրոյան Գարիկ** – Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ,
19. **Վանյան Հասմիկ** – Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ,
20. **Հարությունյան Մերուժան** – Տավուշի մարզպետարան, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,
21. **Ասիլյան Մեղորա** – «Պատմություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող
22. **Խաչատրյան Գառնիկ** – «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանող:

Բաց քվեարկությամբ՝ 24 կողմ, 2 դեմ, 2 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 53/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 16-

րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի զարգացման 2021-2025թթ. ռազմավարական ծրագրի մշակման հանձնաժողովի կազմը ՝ համաձայն հավելված 11-ի։
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

10.2 Լսեցին՝ ԵՊՀ ԻՄ որակի կառավարման հանձնաժողովի կազմի հաստատում հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Հ. Մակարյանի** հաղորդումը։

Նա նշեց, որ հանձնաժողովը կազմվել է համաձայն ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովի կանոնակարգի, համաձայն այդ կանոնակարգի հանձնաժողովում ընդգրկվում են՝ մասնաճյուղի իրավաբանը, ֆակուլտետներում հանձնաժողովի լիազոր-ներկայացուցիչներ, յուրաքանչյուր ֆակուլտետից ուսանողության մեկական ներկայացուցիչ, որոնք ընտրվում են ուսանողական խորհրդի կողմից, արտաքին շահակիցների ներկայացուցիչներ (կազմակերպությունների, հիմնարկների և հասարակական միավորումների ներկայացուցիչներ), հանձնաժողովն ունենում է նախագահ և քարտուղար, որոնք ընտրվում են հանձնաժողովի կողմից անդրանիկ նիստի ժամանակ՝ բաց քվերարկության միջոցով: Հանձնաժողովի աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում, նախագահի հրավերով կարող են մասնակցել այլ նաև մասնագետներ։ Ա.Մակարյանը ներկայացրեց հանձնաժողովի հետևյալ կազմը.

1. **Ճաղարյան Մարիետա-** Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչ
2. **Գրիգորյան Նաթելլա** – Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատարստման բաժնի վարիչ
3. **Աթոյան Միեր** – գիտական քարտուղար
4. **Բեգինյան Լիանա** – Մինչհամալսարանական կրթության և պրակտիկայի կազմակերպման բաժնի վարիչ
5. **Եգանյան Արման** -Արտաքին կապերի բաժնի վարիչ
6. **Նազարյան Նարեկ**-Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժին, իրավախորհրդատու
7. **Պողոսյան Վլադիմիր**-գրադարանի վարիչ
8. **Ղազարյան Նարա-** Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատարստման բաժնի մասնագետ

9. **Թումանյան Լուսինե**- Հումանիտար գիտությունների ֆակուլտետ
10. **Մխիթարյան Քրիստինե** – Կիրառական արվեստի ֆակուլտետ
11. **Մարգարյան Ալեքսան**- Բնական գիտությունների ֆակուլտետ
12. **Ասիլբեկյան Պավել**- Տնտեսագիտության ֆակուլտետ
13. **Հարությունյան Մերուժան** – Տավուշի մարզպետարան, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ (արտաքին շահակից)
14. **Բրուտյան Հայկ** – Իջևանի տարածաշրջանային քոլեջի տնօրեն (արտաքին շահակից),
15. **Էդիլյան Գայանե**- Իջևանի ավագ դպրոցի տնօրեն (արտաքին շահակից, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ)
16. **Ասիլյան Հայկ** – Իջևանի քաղաքային պատկերասրահի տնօրենի պաշտոնակատար (արտաքին շահակից, Կիրառական արվեստի ֆակուլտետ)
17. **Մինասյան Գևորգ**- Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն (արտաքին շահակից, Տնտեսագիտության ֆակուլտետ)
18. **Թովմասյան Արտաշես** – Digital Wave ծրագրավորման կենտրոն (արտաքին շահակից, Բնական գիտությունների ֆակուլտետ)
19. **Վանեսյան Հայարփի**-«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» 3-րդ կուրս
20. **Ասլանյան Ինգա** – «Անգլերեն լեզու և գրականություն» 2-րդ կուրս

Բաց քվեարկությամբ՝ 23 կողմ, 1 դեմ, 3 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 53/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 14-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 16-րդ կետի 14-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ որակի կառավարման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 12-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ